ԵՐԱՍԽԱՀԱՆԻ ՌՄԲԱԿՈԾՈՒՄԸ

Ապրիլի 28ի կէսօրին պատերազմական վիճակ Հայաստան-Նախիջեւան սահմանի Երասխանի շրջանում: Նախորդ օրերի պատահական եւ ծանակի հրաձգութիւններից յետոյ, այդ օրը, ժամը 11.15ին ադրբեջանցի ՕՄՕՆականները անակնկալ վրեցին ռմբակոծել Երասխ հայկական գիւղը եւ մերձակայ գիւղերը՝ ահ ու սարսափ մատնելով տեղի խաղաղ բնակչութեանը: Ադրբեջանցիք գործածում էին հակաօդային ծանր գնդացիրներ եւ թնդանօթներ: Ռմբակոծումը շարունակուեց մինչեւ գիշերուայ ժամը 7.30: Շրջանում տիրում է լարուած կացութիւն: Ադրբեջանցիներն իրենց թնդանօթները տեղադրել են Երասխի դիմացի բլուրների վրայ: